

Հարցաշար

հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
9-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Հելլենական մի ընտանիքում **երկվորյակ** աղջիկներ ծնվեցին: Մեկի անունը դրին Սուտ, մյուսինը՝ Ճշմարտություն: Սուտը թխամորթ էր, ոչ **ակնաահաճո**, Ճշմարտությունը **խարտիշահեր** էր, ուներ վճիտ ու **հոգեթով** հայացք և մշտապես ձերմակ զգեստ էր կրում: Սուտը մշտապես շպարվում էր, որ քրոջից առավել առինքնող էրևա: Սուտը սկզբում հրապուրում էր մարդկանց, բայց շուտով ամենքը հիասթափվեցին նրա պճնված ու անբնական տեսքից:

Չարացավ Սուտը և սկսեց սուտ բամբասանքներ տարածել: Մարդիկ, որ սիրում և հավատում էին միմյանց, սկսեցին գժտվել: Երբ հասկացան, որ դրա մեղավորը Սուտն է, որոշեցին պատժել ամբարիշտ աղջկան:

Իմանալով այդ մասին՝ Սուտը դիմեց հերթական ստորության: Նա քրոջն **առաջարկեց** գետում լողալ: Բարեհամբույր աղջիկը, ոչինչ չկասկածելով, հանվեց ու մտավ գետը: Սուտն անմիջապես հափշտակեց նրա զգեստն ու փախավ: Ճշմարտությունը կռահեց քրոջ նենգ մտադրությունը. բոլորին մոլորեցնելու համար քույրն ուզում է կրել իր ձերմակ զգեստը: Պետք էր անհապաղ օգնել մարդկանց, և Ճշմարտությունն առանց վարանելու սկսեց մերկ շրջել, որ ամենքը տեսնեն իրեն ու չհավատան ձերմակ զգեստով աղջկան:

Շատ տարիներ են անցել: Երբեմն Ստին հաջողվում է մարդկանց խաբել, բայց դա երկար չի տևում, որովհետև ...

Իսկ այդ օրերից մեզ է հասել « » արտահայտությունը:

1. Ավարտի՛ր տեքստի նախավերջին նախադասությունը իմաստին համապատասխանող 2 առած-ասացվածքով կամ թևավոր խոսքով: Լրացրու՛ վերջին նախադասության մեջ բաց թողնված արտահայտությունը (1,5 միավոր)
2. Գրի՛ր ամբարիշտ, վարանել, բարեհամբույր, նենգ, առինքնող բառերի երկուական հոմանիշ: (1 միավոր)
3. Բառակազմորեն վերլուծի՛ր տեքստում ընդգծված բառերը (արմատը՝ մեկ, ածանցը երկու գծով)՝ նշելով հնչյունափոխության դեպքերը: (1 միավոր)
4. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր:
Զայն գիտեմ, զի ոչինչ գիտեմ: (1 միավոր)
5. Տեքստից դուրս գրի՛ր մեկական բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություն: (0,5 միավոր)
6. Գրի՛ր շարադրություն «Երազանքների իմ մոլորակը» վերնագրով: (5 միավոր)